

Նոր Կորոնավիրուս

Հոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց՝ զեկուցելու և մաքրելու վերաբերյալ, երբ մահը տեղի է ունենում տանը

Այս ուղեցույցը տրամադրում է խորհուրդներ այն տների մաքրման և ախտահանման վերաբերյալ, որտեղ որևէ մարդ է մահացել, և հայտնի է, կամ կասկածվում է որ մահը, COVID-19- ի արդյունք է:

Սա ակնհայտորեն դժվար գործ է յուրաքանչյուրի համար, ով ապրել է հանգուցյալի հետ նույն տանը: Ուղեցույցը կոչ է անում ուշադրություն դարձնել զգուշորեն և մարնակրկիտ կերպով բավարարելու լավագույն փորձի պահանջները, որպեսզի հավաստիանաք, որ տունը անվտանգ է դարձել մյուս բնակիչների համար: Այն նաև պահանջում է զգուշորեն ենթարկվել կատարել ցուցումները՝ մաքրողի անվտանգությունն ապահովելու համար: Ի հավելում, չնայած այս առաջադրանքը կարող է մեծ էմոցիոնալ բեռ ունենալ մաքրողի համար, ով գործ է ունենալու մահացածի իրերի հետ և գուցե նաև ստիված լինի դիմակայել այն ֆիզիկական նշաններին, որոնք սենյակը կամ տարածքը դաժնում են մահվան վայր:

Այս ուղեցույցը սկսվում է այն քայլերի համառոտ նկարագրությամբ, որոնք դուք անհրաժեշտ է ձեռնարկել, երբ մահ է տեղի է ունեցել, և այնուհետև մանրամասն նկարագրում է մաքրման գործընթացը:

ԵՐԲ ՏԱՆԸ COVID-19-ԻՑ ՈՐԵՎԷ ՄԱՐԴ Է ՄԱՀԱՆՈՒՄ: ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Նախապես պլանավորեք

Եթե դուք խնամում եք որևէ մեկին, ով COVID-19-ով լուրջ հիվանդ է, հատկապես, եթե այդ մարդը տարեց է կամ քրոնիկական հիվանդություն ունի, որը նրան բարձր վտանգի տակ է դնում, իմաստ ունի նախապես պլանավորել նրա մահվան հավանականությունը առումով: Դուք պետք է.

- Խոսք ձեր բուժաշխատողի հետ, այն քայլերի վերաբերյալ, որոնց պետք է հետևեք;
- Որոշեք, թե որ հուղարկավորության տնից կամ դիարանից եք օգտվելու ծրագրեր կազմեք դիակիզման կամ թաղման վերաբերյալ՝ կախված անձնական և ընտանեկան նախասիրություններից և կրոնական սովորույթներից:

Մահվան ժամանակ

Երբ մահը տեղի է ունենում, շատ կարևոր է, որ դուք պահպանեք կանխարգելման գործառույթները, որոնք իրականացնում էիք հանգուցյալին խնամելիս:

- Ընտանիքի մյուս անդամները պետք է հեռու մնան հիվանդասենյակից: Այլ հանգամանքներում, ընտանիքները սովորաբար հավաքվում են անկողնու մոտ, երբ սիրելի մարդ է մահանում: COVID-19-ի եպքում, դժբախտաբար, վարակի վտանգը դա անհնարհին է դարձնում:
- Դուք ինքներդ պետք է անմիջապես սենյակից դուրս գաք, խուսափելով մահացածի մարմնին կամ սենյակում որևէ այլ բանի ձեռք տալուց: Կարող է դժվար լինի չմնալը, բայց կարևոր է հիվանդասենյակը անհապաղ լքելը՝ և ձեր անձնական առողջությունը պահպանելու համար, և առաջին արձագանքող խմբի գործը հեշտացնելու համար, ովքեր կգան ձեր տուն մահը հաստատելու համար:
- Համոզվեք, որ սենյակից դուրս գալուց հետո անմիջապես հանել եք պաշտպանիչ միջոցները, որ



Նոր Կորոնավիրուս

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց՝ զեկուցելու և մաքրելու վերաբերյալ, երբ մահը տեղի է ունենում տանը

կրում էիք: Մաքրեք ձեր ձեռքերը կամ առնվազն 20 վայրկյան օձառով և ջրով լվանալով, կամ սպիրտային հիմքով ախտահանիչ միջոցով: Ախտահանիչ միջոցը պետք է պարունակի առնվազն 60% սպիրտ, որպեսզի օձառի և ջրի արդյունավետ այլընտրանք լինի: Եթե ձեր ձեռքերը տեսանելիորեն կեղտոտված են, օձառն ու ջուրը ճիշտ ընտրությունն են:

Հաղորդեք մահը, ապա ժամանակ հատկացրեք սփոփվելու համար

Համոզվեք, որ տան անդամներից որևէ մեկը հնարավորինս շուտ զանգահարի 911-ին՝ տեղեկացնելու մահվան մասին:

- Սա կարող է լինել ընտանիքի այլ անդամ, կամ դուք ինքներդ՝ պաշտպանիչ միջոցները հանելուց և ձեռքերը մաքրելուց հետո:
- Ով էլ զանգահարի, պետք է դիսպեչերին հայտնի, որ մահացածը հիվանդ էր COVID-19-ով:
- 911 կուղարկի առաջին արձագանքման խմբին, որոնց մեջ կարող են լինել ոստիկանության և հրշեջ ծառայության աշխատակիցներ: Նրանք կգնահատեն դեպք վայրը և կարող է կապվեն Լոս Անջելես Շրջանի Բժշկական փորձագետ դատաքննիչի հետ: Ձեզ կտեղեկացնեն, թե արդյոք ձեր սիրելիին կարող են տեղափոխել հուղարկավարության տուն կամ դիարան, թե Լոս Անջելես Շրջանի Բժշկական փորձագետ դատաքննիչը պետք է ստանձնի իրավասությունը:
- Եթե նրանք բաց թողնեն մարմինը, դուք կարող եք կապ հաստատել ձեր ընտրած հուղարկավարության տան կամ դիարանի հետ, որպեսզի գան ձեր տուն և տանեն մարմինը: Եթե նախապես չեք ընտրել հուղարկավարության տուն կամ դիարան, պետք է փորձեք հնարավորինս շուտ որոշել մեկը:
- Եթե առաջին արձագանքման խումբը սահմանի, որ Բժշկական դատափորձագետի գնումը անհրաժեշտ է, մարմինը կարող է տեղափոխվել Բժշկական դատափորձագետի գրասենյակ:

Առաջին արձագանքող խմբի գնալուց հետո, և մարմինը հանելու ծրագիր կա, կարող եք ժամանակ տրամադրել ընտանիքի այլ անդամների կողքին լինելու համար:

- Չնայած սոցիալական (ֆիզիկական) հեռավորություն պահպանելու ներկա հրամանները անհնարին են դարձնում հրավիրել ձեր տնից դուրս ապրողներին միանալու ձեզ, դուք անշուշտ, կարող եք զանգահարել ընտանիքի անդամներին կամ ընկերներին կամ մարդկանց համախմբել առցանց կապի միջոցով:
- Կարող եք կապվել նաև հոգևորականության ներկայացուցչի հետ, ով մխիթարության ծառայություն կապահովի հեռախոսով կամ համացանցով:
- Դեռևս կարիք չկա սկսելու մաքրման աշխատանքները: Նույնիսկ մարմինը հեռացնելուց հետո լավ գաղափար է առնվազն 24 ժամ հետաձգել մաքրումը, որպեսզի հիվանդասենյակը կամ հիվանդասենյակ ծառայող տարածքը օդափոխվի:
 - Սակայն, եթե ձեզ անհրաժեշտ է լինելու մաքրման աշխատանքներում մասնագիտացված օգնություն (տես հաջորդ բաժինը), կարող եք այդ պահմանավորվածությունները ձեռք բերել անմիջապես:

Նոր Կորոնավիրուս

Լուս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց՝ զեկուցելու և մաքրելու վերաբերյալ, երբ մահը տեղի է ունենում տանը

ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՈՒՄԸ:

Երբ հուղարկավորության տան կամ Բժշկական դատափորձագետի թիմը տանում է մահացածին ձեր տնից, մաքրման աշխատանքները կարող են սկսվել: Կրկին անգամ, հարկ է նշել, որ ցանկալի է գործընթացը սկսելուց առաջ մեկ օր սպասել:

- Եթե տարածքը կամ սենյակը, որում անձը մահացել է, շատ վտանգված է. եթե մարմինը մնացել է այնտեղ որոշ ժամանակ կամ տարածքը աղտոտված է մարմնի հեղուկներով, ապա աղտոտված իրերով զբաղվելու համար անհրաժեշտ է մասնագիտացած մաքրող, որն ունի սարքավորումներ և վերապատրաստում է անցել: Դուք կարող եք մաքրող գտնել, ով վերապատրաստված է կենսավտանգների հետ առնչվելու ոլորտում այս կայքում.

<https://www.cdph.ca.gov/Programs/CEH/DRSEM/Pages/EMB/MedicalWaste/Trauma-Scene.aspx2>

Երբ մարմինը տարել են և կենսավտանգներով զբաղվել են մասնագետները, կարելի է սկսել ընդհանուր մաքրումը:

- Եթե ընտանիքը հնարավորություն ունի, և չէք ցանկանում ձեր կորստի պահին մաքրելով զբաղվել, նպատակահարմար կլինի մասնագիտացած մաքրող վարձել՝ այդ գործն անելու համար:
- Անկախ նրանից, թե դուք ինչ-որ մեկին կվարձեք մաքրելու համար, թե ինքներդ կմաքրեք, դա պետք է արվի մանրակրկիտ և խնամքով՝ համապատասխան մաքրող միջոցներով և մաքրողը պետք է համապատասխան պաշտպանիչ միջոցներով պաշտպանված լինի:
- Մաքրման աշխատանքները պետք է ներառվեն մեկուսացված բնակելի տարածքը, որտեղ խնամել եք հանգուցյալին, բաղնիքը, որից նա օգտվել է, նրան սպիտակեղենը, հագուստը և այլ իրեր: Մահացածի և՛ անձնական իրերը, և՛ մյուս իրերը, որոնք նա օգտագործել է տան մյուս անդամների հետ միասին, պետք է մաքրվեն և ախտահանվեն:

Ապրանքներ, որոնք պետք է օգտագործել մաքրման և ախտահանման աշխատանքներում:

Մաքրումն ու ախտահանումը երկու առանձին քայլեր են մաքրման գործընթացում:

- Մաքրման նպատակն է հեռացնելը մակերեսներից մանրէները (ներառյալ՝ վիրուսները), կեղտը և անմաքրությունները: Մաքրումը չի սպանում մանրէները, բայց այն նվազեցնում է վարակի վտանգը՝ նվազեցնելով մակերեսի վրայի մանրէների թիվը:
- Ախտահանումը, մյուս կողմից, պարտադիր չէ, որ մակերեսներին մաքուր տեսք տա, բայց այն նվազեցնում է վարակի վտանգը՝ սպանելով մակերեսի վրայի մանրէները: Որքան ուժեղ է ախտահանիչը, և որքան երկար այն մնա մակերեսի վրա, այնքան ավելի շատ մանրէներ այն կսպանի:

Մաքրման համար.

- Տաք ջուրն ու օձառը արդյունավետ են մաքրելու համար: Դրանք մակերեսների վրայից հեռացնում են մանրէները, կեղտը և աղտոտվածությունը:
- Եթե օձառ չունեք, ջրի հետ օգտագործեք մեկ այլ մաքրող հեղուկ:

Ախտահանման համար.

Նոր Կորոնավիրուս

Հոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց՝ զեկուցելու և մաքրելու վերաբերյալ, երբ մահը տեղի է ունենում տանը

- Եթե կա, օգտագործեք EPA-ի կողմից գրանցված կոմերցիոն ախտահանիչ,
- Այլընտրանք է սպիտակեցնող լուծույթի խառնուրդը. 5 ճաշի գդալ (1/3 բաժ) սպիտակեցնող հեղուկ 1 գալոն ջրի համար կամ 4 ճաշի գդալ սպիտակեցնող հեղուկ՝ քառորդ ջրի համար:
- Ալկոհոլը արդյունավետ այլընտրանք է, եթե այլ ախտահանող միջոց ձեռքի տակ չկա:
- Ախտահանող սփրեյները և կենցաղային սպիտակեցնող լուծույթները պետք է նստեն և ծածկեն մակերեսը՝ համաձայն տվյալ քիմիական նյութի պիտակի ցուցումներին:

Մաքրող և ախտահանող միջոցների անվտանգ կիրառումը.

- Ստուգեք ձեր ապրանքի վրայի պիտակները: **Երբեք մի խառնեք** սպիտակեցնող հեղուկը (ժավել) կամ սպիտակեցնող հեղուկ պարունակող ապրանքը այլ ապրանքի հետ, որը **ազոտ** է պարունակում, քանի որ արդյունքում առաջացող գազը չափազանց վտանգավոր է:
- Մաքրող միջոցները պետք է պահվեն երեխաների և ընտանի կենդանիների համար անհասանելի տեղում՝ կուլ տալուց/թունավորվելուց խուսափելու համար:
- Մաքրող միջոցներ օգտագործելիս, եթե եղանակը թույլատրում է, պատուհան բացեք, որպեսզի գազերը ցնդեն:
- Հոգ տարեք ձեր պաշտպանության մասին. տես հաջորդ բաժնում անձնական պաշտպանիչ միջոցների օգտագործման վերաբերյալ ուղեցույցը:

Օգտագործեք համապատասխան անձնական պաշտպանիչ միջոցներ (ԱՊՄ, PPE)

Ձեզ անհրաժեշտ կլինի համապատասխան անձնական պաշտպանիչ միջոցներ՝ մաքրելու ժամանակ վարակվելուց խուսափելու համար: **ԱՊՄ-ը** պաշտպանում են ձեզ ցանկացած աղտոտված նյութից, որը դեռևս տարածքում է գտնվում, երբ դուք սկսում եք մաքրել: Դրանք կարող են պաշտպանել ձեզ նաև թունավոր և գրգռող քիմիկատներից, որոնք պարունակում են մաքրող և ախտահանող միջոցները:

- Կրեք մաքուր, երկարաթև հագուստ՝ մաշկը պաշտպանելու համար:
- Մաքրման ընթացքում հագեք միանգամյա օգտագործման ձեռնոցներ: Երբեք մի լվացեք կամ կրկնակի օգտագործեք ձեռնոցները: Յուրաքանչյուր մաքրումից հետո, ձեռնոցները հարկավոր է դնել նետել: Ձեռնոցները հանելուց հետո, անմիջապես մաքրեք ձեր ձեռքերը՝ առնվազն 20 վայրկյան օձառով և ջրով լվանալով դրանք կամ օգտագործելով առնվազն 60% սպիրտային հիմքով ախտահանիչ միջոց, եթե ձեռքի տակ օձառ և ջուր չկա: Եթե ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են, հարկավոր է օձառ և ջուր օգտագործել:
- Եթե մաքրման ժամանակ կարող են հեղուկներ թափվել, ձեզ հարկավոր է լրացուցիչ ԱՊՄ, ներառյալ դեմքի մեկանգամյա օգտագործման դիմակ և ակնոցներ՝ պաշտպանելու համար ձեր աչքերը, քիթը և բերանը, ինչպես նաև մեկանգամյա օգտագործման խալաթ:
- Պատշաճ կերպով դնել նետել բոլոր ձեռնոցներն ուղիմակները՝ այս փաստաթղթի վերջում նշված ցուցումներին համապատասխան:

Նոր Կորոնավիրուս

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Ուղեցույց՝ զեկուցելու և մաքրելու վերաբերյալ, երբ մահը տեղի է ունենում տանը

Մեկ օր սպասեք, եթե հնարավոր է:

Մահացածի կողմից օգտագործված կամ դիպչած իրերի հետ գործ ունենալիս պետք է զգույշ լինել, քանի որ վիրուսը կարող է որոշ ժամանակ գոյատևել տարբեր մակերեսների վրա:

- Եթե հնարավոր է, ինչպես վերը նշվեց, սպասեք մաքրել տարածքը մինչև մարմինը հեռացնելուց առնվազն մեկ օր (24 ժամ) հետո:
- Եթե կարող եք, մաքրելուց առաջ Օդափոխեք տարածքը՝ բացելով պատուհանները: Տարածքի ճիշտ օդափոխությունը թույլ կտա օդից հեռացնել շնչառական կաթիլները՝ նախքան մաքրելը և ախտահանելը:

Ապրելու որոշակի տարածքները մաքրելու լավագույն փորձը:

- **Կոշտ մակերեսներ կամ հաճախակի հպվող մակերեսները**, ինչպիսիք են սեղանները, դռների բռնակները, զուգարանները և այլն, հարկավոր է սկզբից մաքրել օձառով և ջրով: Ապա կիրառեք ախտահանիչը՝ պիտակի վրա նշված եղանակով: Ախտահանիչը պետք է նստի և ծածկի մակերեսը պիտակի վրա նշված տևողությամբ:
- **Փափուկ մակերեսներ**, ինչպիսիք են կարպետով ծածկված հատակները, գորգերը, վարագույրները և այլն պետք է մաքրեք օձառով և ջրով կամ այս մակերեսների համար նախատեսված նյութերով:
- **Լվացքը**, օրինակ՝ անկողինը, սրբիչները, հագուստը և այլն պետք է լվացվի արտադրողի ցուցումներին համապատասխան՝ թույլատրելի ամենատաք ջրի ջերմաստիճանի պայմաններում: Իրերը պետք է ամբողջովին չորանան մինչև հաջորդ օգտագործումը:
 - Կեղտոտ լվացքի հետ գործ ունենալիս՝ ձեռնոցներ կրեք: Ձեռնոցները հանելուց հետո, մաքրեք ձեր ձեռքերը:
 - Թափ մի տվեք կեղտոտ լվացքը: Թափահարելով օդի մեջ կարող է տարածեք վիրուսները:
 - Մաքրեք և ախտահանեք կեղտոտ լվացքը պարունակող զամբյուղները՝ համաձայն ստորև նշված ցուցումների:
- **Էլեկտրոնիկան**, ինչպիսիք են պլանշետները, սենսորային էկրանները, ստեղնաշարերը և հեռակառավարիչ վահանակները պետք է խոնավ մաքրվեն՝ մաքրման և ախտահանման արտադրողի ցուցումներին համապատասխան:
 - Եթե ցուցումներ չկան, օգտագործեք ալկոհոլի հիմքով խոնավ անձեռոցիկներ կամ առնվազն 70% ալկոհոլի հիմքով սփրեյներ, որոնք պարունակում են առնվազն 70% ալկոհոլ: Թողեք մակերեսները լավ չորանան:
- **Աղբը** պետք է հավաքել աղբի դույլի մեջ, որի մեջ պլաստիկ տոպրակ է հագցրած: Երբ լցվի, կապեք տոպրակի բերանը և դեն նետեք դրսում տեղադրված կենցաղային աղբի տարանների մեջ:
- **Անձմական պաշտպանիչ միջոցների հանելը** ճիշտ հերթականությամբ անհրաժեշտ է վարակից խուսափելու համար:
 - Սկզբից հանեք և դեն նետեք ձեռնոցները; մաքրեք ձեր ձեռքերը ձեռնոցները հանելուց հետո՝ առնվազն 20 վայրկյան լվանալով ձեռքերը օձառով և ջրով կամ օգտագործելով առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց, եթե օձառ և ջուր ձեռքի

Նոր Կորոնավիրուս

Լուս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունն Ուղեցույց՝ զեկուցելու և մաքրելու վերաբերյալ, երբ մահը տեղի է ունենում տանը

տակ չկա:

- Հաջորդը, մի ձեռքով հանք ակնոցները, մյուս ձեռքով դիմակը և դեն նետեք այն: Նորից մաքրեք ձեր ձեռքերը:
- Բոլոր օգտագործած ձեռնոցները, դիմակները և մյուս աղտոտված իրերը պլաստիկ տոպրակի մեջ և կապեք բերանը, մինչ կենցաղային այլ աղբի հետ թափելը: Այս իրերի հետ գործ ունենալուց հետո մաքրեք ձեռքերը:

Մանրակրկիտ մաքրումն ու ախտահանումն ավարտելուց հետո, տարածքը կարելի է վերաբնակեցնել:

COVID-19-ի վերաբերյալ ավելի ընդհանուր տեղեկությունների համար այցելեք՝

- [Los Angeles County Department of Public Health](#)
- [California Department of Public Health](#)

Մաքրման վերաբերյալ հատուկ տեղեկությունների համար, ներառյալ ԱՊՄ-ն հանելու և թափելու վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար, այցելեք՝

- [Centers for Disease Control and Prevention Cleaning Guidance](#)
- [Environmental Protection Agency, Disinfectants for Use Against SARS-CoV-2](#)